

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓԱՍՏԱԲԱՆ-ՎԵՏԵՐԱՆՆԵՐԸ

09.05.2015 14:47



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում տեղի է ունեցել Մեծ Հայրենական պատերազմին մասնակցած վետերան-փաստաբանների մեծարման միջոցառում։ Վետերան-փաստաբանների մայիսիսյան հանդիպումները փաստաբանների պալատում արդեն ավանդական են դարձել։ Այս տարի էլ փաստաբանների պալատն ընդունել է Հայրենական պատերազմի մասնակիցներ, փաստաբաններ Նարիման Միրզաբեկյանին, Հրաչիկ Գոգինյանին և Մայիս Ավետիսյանին։ Նրանք այն հազարավոր հայորդիների շարքերում էին, ովքեր ներկայացել են շրջանային զինկոմիսարիատներ ու կամավոր զինվորագրվել հայրենիքի պաշտպանությանը։ Վետերանները պատմել են իրենց մարտական ուղղու մասին։ Նարիման Միրզաբեկյանը հիշում էր, թե ինչպես մարտական առաջադրանք կատարելու հրաման ստանալու նպատակով առիթ է ունեցել շփվել ԽՍՀՄ մարշալ Գեորգի Ժուկովի հետ։ Փաստաբաններին հանձնել են Պալատի խորհրդանշական կրծքանշաններ և շնորհակալագրեր Հայրենական պատերազմում տարված հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ։

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })